Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 404 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏՈՒԺԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերում և Երևանում կարիքավոր ընտանիքներին այդ թվում արցախյան պատերազմից տուժած ընտանիքներին՝ տրամադրելով սոցիալ-հոգեբանական և տնտեսական աջակցություն, ապահովելով մշտական եկամտի աղբյուր և զարգացնելով տարբեր օժանդակ հմտություններ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1. «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 2. «Վորլդ Վիժն» Կանադայի աջակցող գրասենյակ հասցե՝ 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Կանադա 3. «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Թայվան 4. «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ հասցե՝ Rue du Pré-de-la-Bichette 1, 1202 Ժնև, Շվեյցարիա 5. «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ հասցե՝ 9 Rue Ampere, 75017 Փարիզ, Ֆրանսիա 6. «Վորլդ Վիժն» Նիդերլանդների աջակցող գրասենյակ հասցե՝ Utrechtseweg 12, 3811 NB, Ամերսֆուրտ, Նիդերլանդներ

4.	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (Հասցե՝ քաղաք Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզեր, քաղ. Երևան, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	435.476.033 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ապարանի, Ամասիայի, Նոյեմբերյանի, Գավառի, Ճամբարակի, Վարդենիսի, Կապանի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված համայնքների կարիքավոր ընտանիքները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	15 մարտ, 2022 թ.- 31 դեկտեմբեր, 2023 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հաշվետու ժամանակահատվածում սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները. 1. Առանձնացնել համայնքներում ծայրահեղ կարիքավոր երեխաներին/ընտանիքներին՝ աղքատության փուլային հաղթահարման մոդելի միջոցով աջակցություն տրամադրելու համար: (Ծրագրի շահառու են Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված համայնքների 403 ընտանիքներ): Բյուջե՝ 135,938,331 դրամ, ժամկետ՝ 15.03.2022 թ. – 30.09.2022 թ. 2. Խթանել առավել խոցելի ընտանիքներում երեխաների կարողությունների զարգացմանը «Դրական ծնողավարում», «Առաջ, փոքրիկ, առաջ», «Խաղաղության ճանապարհ», «Տոնելով ընտանիքները» մոդուլների համաձայն: Բյուջե՝ 14,318,856 դրամ, ժամկետ՝ 15.03.2022 թ. – 30.09.2022 թ. 3. Զարգացնել երեխաների կարողությունները և բարձրացնել տեղեկացվածությունը բռնությունից զերծ մնալու համար տարբեր համայնքային միջոցառումների, ամառային ճամբարների և դասընթացների միջոցով: Բյուջե՝ 43,882,533 դրամ, ժամկետ՝ 15.03.2022 թ. – 31.08.2022 թ. 4. Խոցելի երեխաները ստանում են որակյալ և կայուն ծառայություններ և խնամք՝ զարգացնելու և իրացնելու իրենց ներուժը: Բյուջե՝ 177,961,239 դրամ, ժամկետ՝ 15.03.2022 թ. – 31.07.2022 թ., 01-31.09.2022 թ. 5. Խոցելի երեխաների և նրանց ընտանիքների համար սոցիալական ծառայությունների օրենսդրական և համակարգված բարելավման ջատագովում՝ դասընթացների և օրենսդրական

		փոփոխություններին աջակցման միջոցով: Բյուջե՝ 11,900,574 դրամ, ժամկետ՝ 15.03.2022 թ.-30.06.2022 թ., 01-31.09.2022 թ. 6. Արցախյան պատերազմից տուժած կարիքավոր ընտանիքներին ընդգեռնել սոցիալական և տնտեսական ինտեգրման ավելի լայն հնարավորություններ՝ սոցիալական և տնտեսական ինտեգրման հմտությունների երկարաժամկետ զարգացման և համապատասխան աջակցություն/նյութական օգնության միջոցով: Բյուջե՝ 51,474,500 դրամ, ժամկետ՝ 15.03.2022 թ. – 30.06.2022 թ.
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման շրջանակներում ձեռք բերվող ապրանքներն ու ծառայությունները և դրանց արժեքները. 1) Գրասենյակային պարագաներ (գրենական պարագաներ և մաքրող նյութեր, հիգիենայի պարագաներ) – շուրջ 40.000.000 դրամ 2) Վառելիքի մատակարարում - շուրջ 15.000.000 դրամ 3) Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում- շուրջ 5.000.000 դրամ 4) Ահազանգման համակարգի անվտանգության ծառայություն և պահնորդական ծառայություն - շուրջ 7.000.000 դրամ դրամ 5) Կորպորատիվ VPN և Ինտերնետ ծառայություն - շուրջ 4.400.000 դրամ 6) Հետվճարային հեռախոսակապի ծառայություն- շուրջ 8.500.000 դրամ 7) Հյուրանոցային ծառայությունների մատուցում - շուրջ 25.500.000 դրամ 8) Տաքսի ծառայություն - շուրջ 2.000.000 դրամ 9) Տպագրական ծառայություններ- շուրջ 9.500.000 դրամ Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառում են կոմունալ վճարներ Երևանի,Գավառի,Նոյեմբերյանի և Կապանի գրասենյակների համար. 1) Էլեկտրական էներգիայի մատակարարում - շուրջ 4.260.000 դրամ 2) Բնական գազի մատակարարում - շուրջ 4,440.000 դրամ 3) Խմելու ջրի մատակարարում և ջրահեռացման ծառայությունների մատուցում - շուրջ 448.392 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառում են կոմունալ վճարներ Երևանի,Գավառի,Նոյեմբերյանի և Կապանի գրասենյակների համար.

		1) Էլեկտրական էներգիայի մատակարարում - շուրջ 4.260.000 դրամ 2) Բնական գազի մատակարարում - շուրջ 4,440.000 դրամ 3) Խմելու ջրի մատակարարում և ջրահեռացման ծառայությունների մատուցում- շուրջ 448.392 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքային սոցաշխատողների, մանկապարտեզների, եկեղեցիների, ոստիկանության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության ստորաբաժանումների, ինչպես նաև համայնքներում գործող դպրոցների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

10.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ